

**ՀՆԱԳՈՒՅՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ
ԱՐՏԱՑՈՒՈՒՄԸ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐՈՒՄ
(հայերենի և անգլերենի՝ սննդամուկ պարունակող
դարձվածքների նյութի հիման վրա)**

Յուրաքանչյուր լեզվի պատկերավոր արտահայտությունները՝ դարձվածքները, խոսքի բաղադրիչներ լինելով՝ ոչ միայն այն դարձնում են ավելի արտահայտիչ և որոշակի զգացմունքներ առաջացնում, այլև տեղեկություն են հաղորդում հատկապես տվյալ լեզվով խոսող ժողովրդի մշակույթի մասին:

Եթե դարձվածքները դիտարկենք պատմական տեսանկյունից, կարող են ասել, որ դրանց մեծ մասը գալիս է հնուց՝ արտացոլելով ժողովրդական բանահյուսությունը, այդ լեզուն գործածող ժողովրդի արժեքների համակարգը, բարոյական նորմերը, աշխարհայացքը, հոգեբանությունը, կենցաղի պայմանները, պատմական կենսափորձը, հավատալիքներն ու սնահավատությունները, սովորույթներն ու ավանդույթները:

Այս առումով հատկապես հետաքրքրական են գուգադրվող լեզուներին հատուկ հավատալիքներն ու ավանդույթները, որոնցից շատերն իրականում պատմության գիրկն են անցել, բայց շարունակում են իրենց գոյությունը դարձվածքների կազմում:

Այս հոդվածում նպատակ ենք դրել վեր հանել հայերենի և անգլերենի դարձվածքներում հանդիպող *սննդամուկների* հետ կապված ավանդույթներն ու սովորույթները:

Այս նպատակով համեմատական պատմական ուսումնասիրություն ենք անցկացրել՝ փորձելով պարզել, թե որ ազգային հավատալիքներն ու սովորույթներն են դարձվածքների հիմք հանդիսանում երկու լեզվում: Դա հնարավոր է կատարել, քանի որ դարձվածքների հիմք հանդիսացող սովորություններն արտացոլված են գրավոր հուշարձաններում կամ առ այսօր պահպանվել են ժողովրդի մեջ:

Մեր նախնիները այն հավատալիքն են ունեցել, որ սննդի մեջ որոշ կենդանիների միսն օգտագործելով կարող են ձեռք բերել նրանց դրական հատկանիշները, իսկ երբեմն էլ կարող են տանջել մեկին որևէ կենդանու միս ուտեցնելով¹: Այս հավատալիքներն արտացոլված են բազմաթիվ դարձվածք-

¹ Ֆրեդեր Զ.Ի., Ոսկե նյութը, «Հայաստան», Երևան, 1989, էջ 32:

ներում, ինչպես օրինակ.

օձի միս ուտել - համարձակվել (սովորաբար հարցական և ժխտական նախադասություններում),

քաչալ հավի միս ուտել - շատ ապրել,

խորոված օձի միս ուտեցնել - շատ չարչարել, տանջել, հոգին հանել,

շան միս կերցնել - նեղել, չարչարել, տանջել:

Ինչպես նշեցինք, սննդանուն պարունակող դարձվածքները (այսուհետ՝ ՍՊԴ) կարող են տեղեկություն հաղորդել տվյալ ժողովրդի սովորույթների և ավանդույթների մասին: Օրինակ, Հայաստանում հնագույն ավանդույթ է եղել, որն արտացոլված է «գլուխը ձկան խաչ կար» (բախտը բերեց) դարձվածքում: Ըստ այդ ավանդույթի՝ որոշակի տեսակի ձկների գլխում երկար խաչաձև ոսկոր կա, որի պատճառով ձուկը քրիստոնեության խորհրդանիշն էր դարձել և հենց այդ պատճառով այդպիսի ձկները մահմեդականների շրջանում չեն ուտում: Մինչդեռ հայերը սովորություն ունեին գլխարկի վրա այդ խաչի ձև ունեցող ոսկորը ամրացնել՝ համարելով, որ այն կարող է բազմաթիվ փորձանքներից ազատել: Մեկ այլ հետաքրքրական փաստ է այն, որ քարայրներում համդիպող պատկերների մեծ մասը ձկան տեսք ունեն², և կարող ենք ենթադրել, որ մեր նախնիները ևս հավատում էին չարից պաշտպանելու ձկան մոգական հատկությամբ:

Իսկ անգլերենում մեկ այլ ավանդույթ կազմում է "eat not fish" (պաս պահել) դարձվածքի հիմքը: Այդ սովորույթը կապված է էլիզաբեթ I կայսրուհու ժամանակների հետ, երբ միայն կաթոլիկներն էին պաս պահում (այդ պասի տևությունը կայանում էր նրանում, որ ուրբաթ օրերին միայն ձուկ էին ուտում): Նրանք համարվում էին քաղաքական առումով կասկածելի և անվստահելի մարդիկ: Հակադրվելով նրանց՝ ոչ կաթոլիկները պաս չէին պահում՝ ցույց տալով իրենց հավատարմությունը:

Ըստ հին անգլիական սովորույթի՝ տոների ժամանակ, հատկապես հունվարի 6-ին տոնվող "Twelfth night" կոչվող տոնի ժամանակ, կարկանդակի մեջ լոբու հատիկ էին դնում, և ում ընկնում էր լոբով այդ կտորը, համարվում էր տոնական ընթրիքի թագավորը: Այդ սովորույթը արտացոլված է "find the bean in the cake" դարձվածքում, որը նշանակում է «հաջողություն ունենալ, բախտը ժպտալ» (հատկապես լոտո շահելու մասին):

Ըստ մեկ այլ անգլիական սովորույթի՝ դպրոցականներն իրենց

² Իլյրաբեյան Հ.Ռ., Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1973:

ուսուցչին փայլեցրած խնձոր էին նվեր բերում: Այստեղից էլ "polish the apple" դարձվածքը, որը նշանակում է «փորձել ինչ-որ մեկի բարեհաճությունը բժնանքով, շողոքորթությամբ գրավել»:

Հնագույն մի ավանդույթ է ընկած «խնձորը զարկել/ խփել մեկին» (որևէ տղամարդու հավանել, ընտրել որպես նշանած) դարձվածքի հիմքում: Հին հայերի համար կարմիր խնձորը սիրո և ամուսնական կապի խորհրդանիշն էր: Ըստ Զ.Վ. Խառատյանի՝ երբ մեկին իբրև սիրելի հավանում էին, կարմիր խնձոր էին տալիս նրան³: Ընդ որում, մայրիշխանության ժամանակ մայրիրավական տոհմի ներկայացուցիչներն ունեին ընտրություն կատարելու իրավունք. եթե որևէ տղամարդու հավանում էին, նրան խնձորով հարված էին հասցնում: Այս ավանդույթն արտացոլված է տարբեր գրական ստեղծագործություններում, հատկապես դրա մասին առատ նյութ է պարունակում մեր ժողովրդական էպոսը: Ըստ Ռ.Նահապետյանի՝ էպոսում Սասունցի Դավիթը ներկայանում է իբրև հայրիրավական տոհմի ներկայացուցիչ, իսկ Խանդուղը՝ մայրիրավական տոհմի⁴: Դավիթը Խանդուղին ընտրելիս՝ հայրիրավական կարգով դեմքի վրա խաչաձև համբույրով արգելանքի (տաբուացնելու) ձև է կիրառում, որն օրիորդին զայրացնում է, իսկ ինքը՝ Խանդուղը, Դավթին խնձորով հարված է հասցնում, որը տղային յուրային դարձնելու ձևն է խորհրդանշում⁵: Այս ավանդույթի մասին նշում է նաև Զարգանդ Դարյանը իր «Արծիվ Վասպուրականի» գրքում. «...Այժմ միայն անդրադարձավ, որ Սաթենիկի պահունի խշխշան մինթանայից խնձորի հոտ էր գալիս, երբ նա սենյակ մտավ: Թերևս այն խնձորի, որ չորս տարի առաջ դիպավ իր թիկունքին՝ ծակելով սիրտը...»⁶:

Հետաքրքիր է նաև Adam's apple (ադամախնձոր) դարձվածքի ծագումը: Ըստ Բրեվերի բառարանի՝ ադամախնձորը այդպես է կոչվում այն սնահավաստության պատճառով, որ իբր թե դրախտի արգելված պտուղն ուտելիս՝ դրա մի կտոր մնացել է Ադամի կոկորդում⁷:

Ըստ հին անգլիական սովորույթի՝ աղը դնում էին սեղանի մեջտե-

³ Խառատյան Զ.Վ., Պաշտամունքային մոտիվները հայոց ընտանեկան ծիսակարգում // Հայ ազգագրություն և բանահյուսություն, Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատ., Եր., 1989, հատոր 17, էջ 12-14:

⁴ Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Եր. համալս. հրատ., Երևան, 2004, էջ 115:

⁵ Սասնա ծռեր (Սանուկ Աբեղյանի խմբագրությամբ), Խ. Ա. «Պետական հրատարակչություն», Երևան, 1936, էջ 1072-1073:

⁶ Դարյան Զ., Արծիվ Վասպուրականի, «Սովետական գրող», Երևան, 1988, էջ 68:

⁷ Brewer's dictionary of phrase and fable, "Harper & Row", London, 1968, p. 9.

դում, ընդ որում նշանավոր, հայտնի հյուրերին նստեցնում էին սեղանի վերին, իսկ ոչ անվանի հյուրերին, աղքատ հարազատներին և ծառաներին՝ ներքևի հատվածում⁸։ Այս սովորույթը իր արտացոլումն է գտել հետևյալ դարձվածքներում։

sit above the salt - 1. հնց. նստել սեղանի վերին հատվածում 2. փխբ. հասարակության մեջ բարձր դիրք գրավել,

sit below the salt - 1. հնց. նստել սեղանի ներքևի մասում 2. փխբ. հասարակության մեջ համեստ դիրք գրավել։

Աղի հետ կապված շատ այլ սովորույթներ կան, որ ընկած են դարձվածքների հիմքում։ Հայտնի է, որ հազարավոր տարիներ առաջ աղը շատ քանկ էր՝ մեծ պահանջարկի և հարաբերական սակավության հետ կապված։ Այդ պատճառով այն փոխանակման միջոց էր ծառայում, և այդպես հռոմեացի զինվորները մասամբ աղով էին վարձատրվում⁹։ Այստեղից էլ առաջացել է **“(be) worth one’s salt”** դարձվածքը, որը նշանակում էր «արժանի լինել իր աշխատավարձին», այժմ էլ այդ իմաստը որոշ չափով պահպանել է՝ «լավ, արժանի մարդ, լավ աշխատող (լինել)»։ Հետաքրքրական է այն, որ անգլերեն salary «աշխատավարձ» բառը, որի հիմքում ընկած է լատիներեն sal «աղ» բառը, առաջացել է հենց այս սովորույթից։

Բացի այդ կարծում էին, որ աղը նաև բուժիչ հատկություններ ունի և հակաթույն է։ Այն մարդիկ, ովքեր կասկածում էին, թե ուտելիքը հնարավոր է թունավորված լինի և հիվանդության պատճառ հանդիսանա, իբրև կանխարգելիչ դեղամիջոց այն ընդունում էին մի փոքր աղով։ Այս փաստը արտացոլված է **“take/ receive with a grain/ pinch of salt”** (կասկածանքով՝ թերհավատությամբ վերաբերել, քննադատորեն մոտենալ մի բանի) դարձվածքում։ Այս բացատրությունը տվել է ստուգաբան Քրիստին Ամմերը և այն կապել հռոմեացի զենքերալ Պոմպեոսի տեսության հետ, ըստ որի մի քիչ աղը հակաթույն է, իսկ այս տեսությունն էլ Պոմպեոսի մահից հետո (մ.թ.ա. 48) մեր թվարկության 77 թվականին գրի է առել Պլինիոսը։

Արևելյան երկրներում սովորույթ է եղել երդվելիս աղ ու հաց ուտել՝ ի նշան ասվածի հավաստիության։ Այս սովորույթն արտացոլված է և հայերենի, և անգլերենի ՍՊԴ-ում, ինչպես օրինակ՝ աղ ու հացով երդվել - երդվել միասին կերածով՝ ի նշան բարեկամության take bread and salt - երդվել։

⁸ Brewer's dictionary of phrase and fable, p. 749; Кунин А.В., Фразеология современного английского языка, нзд-во “Международные отношения”, М., 1972, с. 26.

⁹ Cowie A.P., Mackin R., McCaig I.R., Oxford Dictionary of Current Idiomatic English, volume 2: Phrase, Clause and Sentence Idioms, Oxford Univ. Press, Hong Kong, 1984, p. 600; Brewer's dictionary of phrase and fable, p. 794.

«Աղի» հետ կապված մեկ այլ սովորություն է արտացոլված «մատին աղ անել» (հնց. մեկին օգնել, որեւ բանով աջակցել, ծառայություն մատուցել) դարձվածքում: Հնում, երբ մարդիկ կտրում էին մատը, շտապ, երբեմն միակ բուժօգնությունը աղն էր: Մատի կտրված տեղին աղ էին ցանում: Դա թեև ցավ է պատճառում, բայց իսկույն մակարդում է արյունը¹⁰:

Հեթանոսական ժամանակաշրջանից ավանդված մի հավատալիք է ընկած «հոգու հաց» (կրոն. հոգեհաց) դարձվածքի հիմքում: Այն է՝ մեռած անձի կրկնակը, որ ամեն բանով նման է իրեն, ենթարկված է, կենդանի եակներին ոչ պակաս, տանջանքի, ցրտի քաղցի, ծարալի, այստեղից, բնականաբար ծագում է այն ենթադրությունը, որ նա ևս կարիք է զգում ուտեստի, խմիչքի, հանդերձի և այլն¹¹: Հետևաբար, ողջերը պետք է սիրաշահեին ննջեցյալների հոգիներին, որպեսզի այս կամ այն արարքից դժգոհ մնացած հոգին վնաս չպատճառեր կենդանի մնացածներին: Այստեղից է առաջացել թաղման օրը, յոթին, քառասունքին և տարելիցին մեծ բազմությանը ճաշ՝ հոգու հաց տալը: Այսինքն հավատում էին, իբր մեռածի հարազատների կերած սնունդը, այդ կերակուրի գորությունը անցնում է ոչ թե անմիջապես ուտողներին, այլ մեռածների հոգիներին¹²:

Հայաստանում Մեծ պասի հինգշաբթի օրը կանայք խնոցի էին հարում և կարագ պատրաստում, որից մի-մի գունդ տանում էին եկեղեցի աղոթելու: Կարագն աղոթելուց հետո, այն քսում էին ճակատին, ձեռքին, կրծքին, աչքերին և այլն¹³: Նմանատիպ ավանդույթի մասին նշում է նաև Ս.Մալխասյանցը. «Հին ժամանակներում քահանաները կամ եպիսկոպոսները օրհնում էին ձեթը (ոչ մեռնոն), որով օծում էին սկրտվողներին նախքան մեռնոնով դրոշմը կամ հիվանդներին»¹⁴: Այս ավանդույթները պատմության գիրկն են անցել, սակայն նրանցում ամփոփված պատկերը պահպանվել է բազմաթիվ դարձվածքների հիմքում: Ինչպես օրինակ՝

¹⁰ Գևորգյան Ե.Հ., Հայերենի դարձվածքները, Եր. համալս. հրատ., Երևան, 1969, էջ 51:

¹¹ Լալայան Ե., Ծիսական կարգերը հայոց մեջ, Ա. Պրակ. Արտատպված Ազգագրական Հանդեսից, Էլեքտրատպ. օր. Ն. Աղանեանի, Պոլից. 7, Թիֆլիս, 1913, էջ 52:

¹² Նահապետյան Ռ., Աղծնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Եր. համալս. հրատ., Երևան, 2004, էջ 196: Խառատյան Զ.Վ., Պաշտամունքային մոտիվները հայոց ընտանեկան ծիսակարգում /Հայ ազգագրություն և բանահյուսություն, Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1989, հատոր 17, էջ 36: Սամուելյան Խ., Հայ ընտանեկան պաշտամունքը, «Ազգագրական Հանդես», գիրք 12, արագատիպ Մ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1905, էջ 236:

¹³ Լալայան Ե., Երկեր: Հինգ հատորով, ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1988, հատոր II, էջ 199:

¹⁴ Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան / 4 հատորով/, «Հայպետհրատ», Երևան, 1944-1945, հատոր III, էջ 172:

գլխին յուղ/ եղ քսել (մեկի) - մեկի գլուխը յուղել, խաբելով համոզել, միամտացնել,

բերանին յուղ քսել - խսկց. մեկին կաշառել, կաշառք տալ, դնչին յուղ քսել - խսկց. կաշառել, կաշառելով իր կողմը գրավել,

դռնին յուղ քսել - խսկց. մեկի ծախորդությամբ, դժբախտությամբ ուրախանալ,

սրտին յուղ/ եղ քսել - ուրախացնել, բավարարել,

քթին ձեթ տալ - խսկց. շողոթորթել, համոզել:

Անգլիայում մեկ այլ հիմն սովորություն է եղել. որի համաձայն պանդոկի տերերը պատատուկի ճյուղ էին կախում՝ ի նշան այն բանի, որ վաճառքում գինի ունեն¹⁵: Նշված սովորույթը հիմք է հանդիսացել "good wine needs no bush" (բառացի լավ գինին պիտակի կարիք չունի) դարձվածքի համար:

Շատ հետաքրքրական մի ավանդույթ հանդիսանում է "bring home the bacon" (խսկց. հաջողության հասնել մի գործում, բարգավաճել) դարձվածքի հիմքը: Ըստ այդ ավանդույթի՝ եթե ցանկացած մարդ, որը մի տարի և մի օր ամուսնացած լինելով և չգղջալով դրա համար՝ Անգլիայում ցանկացած տեղ ծնկի գար եկեղեցու դռան մոտ և երգվեր ու կարողանար ապացուցել, որ ամբողջ տարվա ընթացքում չի վիճել իր կնոջ հետ կամ չի ուզել նրանից բաժանվել, վանահոր կողմից կպարգևատրվեր խոզի ապխտած մսով: Հաջողության դեպքում նրան շքերթով, հատուկ բարձր աթոռի վրա նստեցրած էին տանում տուն:

Շեքսպիրյան "cakes and ale" (ուրախություն, զվարճանք, ցուփ ու շվայտ կյանք) դարձվածքում արտացոլված է տոն, տոնակատարություն կազմակերպելու անգլիական ժողովրդին բնորոշ սովորույթը: Այն է՝ 15-16-րդ դարերում եկեղեցիները «էլեր» էին կազմակերպում, որպեսզի դրան հավաքեին ծխական եկեղեցու վերանորոգման ու պահպանման համար¹⁶: Տոնակատարությունը կոչվում էր «էլ», որովհետև նախապես հատուկ այդ տոնի համար «էլ»՝ գարեջուր էր եփվում ու վաճառվում շահույթ ստանալու նպատակով: Էլեր անցկացվում էին ամբողջ տարվա ընթացքում, թեև հիմնականում ամռանը և գարնանը, և բացի ուտելիքից ու խմիչքից ընդգրկում էին մի ամբողջ շարք գործողություններ՝ խաղեր, երաժշտություն, պար, մի խոսքով զվարճանքի տարբեր տեսակներ, այսինքն՝ պարզ է, որ "ale" բառը

¹⁵ Cowie A.P., Mackin R., McCaig J.R., Oxford Dictionary of Current Idiomatic English, volume 2. Phrase, Clause and Sentence Idioms, p. 244; Кунин А.В., Курс фразеологии современного английского языка, "Высшая школа", М., 1986, с. 183.

¹⁶ Simpson J., Roud S., A Dictionary of English Folklore, Ox Univ Press, 2000, [ONLINE]. Retrieved June 2007. Web site <http://www.oxfordreference.com/views/ENTRY.html?subview=Main&entry=t71.e1117/>

օգտագործվում էր ցանկացած տոնի կամ հավաքույթի իմաստով և նշանակում էր «ուրախություն, զվարճանք, անհոգ կյանք»։ Այս սովորույթի արտացոլումն է "Life is not all cakes and ale" դարձվածքը, որը նշանակում է «կյանքը, ապրելը այնքան էլ հեշտ բան չէ»։

ԱՄՆ-ի ստրկական նահանգներում սովորույթ է եղել գյուղական մրցույթներ անցկացնել։ Այդ հավաքույթների ժամանակ ստրուկները կամ նրանց ազատ ժառանգները զույգերով քայլում էին տորթի շուրջ և ամենամարբազեղ զույգը մրցանակ էր ստանում այդ տորթը¹⁷։ Հեշտությամբ հաղթելու այս հնարավորությունը հիմք է տվել "take the cake" (ամառչին տեղը զրավել, մրցանակ շահել, բոլորից լավը լինել), "a piece of cake" (ինչ-որ հեշտ բան) դարձվածքներին։

Բավականին հետաքրքիր է "eat humble pie" դարձվածքի ծագումը։ Ըստ Բրեվերի՝ "humble" բառը 19-րդ դարի վերջին սխալ թարգմանվել է 16-րդ դարի՝ միջին անգլերենի "umbles" բառից, որը ոչ թե «հասարակ» է նշանակում, այլ «փորոտիք», իսկ դարձվածքը ծագում է հետևյալ սովորությունից։ Անգլիացի լորդերը սիրում էին որսորդության գնալ և ուտել իրենց սպանած եղնիկի միսը, իսկ որսորդության ժամանակ իրենց օգնած սպասավորներին և ընդհանրապես ծառաներին մատուցում էին կենդանու ներքին օրգաններից՝ սրտից, լյարդից, փորոտիքից պատրաստված կարկանդակ¹⁸։ Այսինքն՝ "eat humble pie" նշանակում է «ընդունել քո սխալը կամ ստորադաս դիրքը, հնազանդվել, ստորանալ»։

Ծագման հետաքրքիր աղբյուր ունի "pie in the sky" (խսկց. անիրականանալի ցանկություն, երազանք կամ հույս) դարձվածքը։ Ջո Հիլ (1879-1914) անունով մի մարդ, որը աշխատանքի հայտնի կազմակերպիչ էր, խիստ քննադատում էր ստրուկների նկատմամբ քահանայի վերաբերմունքը։ Նա մի մեղեդի էր գրել «Քարոզիչը և ստրուկը» ("The preacher and the slave") վերնագրով, որում մեղադրում էր քահանային երկնքում ավելի լավ կյանք ունենալու սուտ խոստումներ տալու համար, քանի որ մարդիկ երկրի վրա սովամահ էին լինում։ Ներկայացնում ենք այդ երգի կրկներգը, որն էլ հենց հիմք է տվել այս դարձվածքին.

You will eat by and by
In that glorious land above the sky
Work and pray, live on hay.
You'll get a pie in the sky when you die.

¹⁷ Brewer's dictionary of phrase and fable, 1968, p. 162.

¹⁸ Cowie A.P., Mackin R., McCaig I.R., Oxford Dictionary of Current Idiomatic English, volume 2. Phrase, Clause and Sentence Idioms, 1984, p. 164

That's a lie!¹⁹

Հայերենի ՍՊԴ-ում ևս հանդիպում է ժողովրդի բացասական վերաբերմունքը աստծու, սրբերի, քրիստոնեական եկեղեցու քարոզած հոգու անմահության գաղափարի նկատմամբ: Դա պայմանավորված է նրանով, որ դարերի ընթացում եկեղեցին ոչ թե փորձել է լավացնել ժողովրդի սոցիալական վիճակը, այլ իշխող դասակարգերի հետ միասին մասնակցել ժողովրդի հարստահարման, ճնշման ու ստրկացման գործին: Ըստ Ա.Ղանալանյանի՝ «եկեղեցին հնազանդության ու հպատակության իր քարոզներով աշխատել է թմրեցնել ու զինաթափ անել ժողովրդին, կասեցնել նրա բուռն ատելությունն ու պայքարը ճնշողների դեմ»²⁰: Իսկ դա առաջացրել է հակադարձ ռեակցիան՝ պայքարը կրոնի ու կրոնավորների, եկեղեցու ու եկեղեցական ծեսերի դեմ, բացասական վերաբերմունք այն ամենի նկատմամբ, ինչը կապված է եկեղեցու հետ, որն արտահայտված է հայ ժողովրդի դարձվածքներում, ինչպես օրինակ «*վանքի հաց ուտել*» դարձվածքը, որը նշանակում է «հիմարանալ»:

Երբ դեռ մեքենայի գյուտը չէր կատարվել, մարդիկ իրենց բեռը տեղափոխում էին ծիով կամ էշով, և որպեսզի ստիպեին կենդանուն առաջ շարժվել նրա դիմացից գազար էին կախում և միևնույն ժամանակ հետևից փայտով հարվածում, որ կանգ չառնի: Այս սովորույթը արտացոլված է անգլերենի «*carrot and stick policy*» դարձվածքում, որը նշանակում է «համոզելու նպատակով միաժամանակ և պարզ և խոստանալ, և սպառնալ»:

Հին հռոմեական ամուսնական արարողության ժամանակ փեսան հարսին իր տուն տանելիս՝ հավաքվածներին ընկույզ էր բաժանում՝ ցույց տալով նրանց, որ հրաժարվում է իր տղայական զվարճանքներից²¹: Հավանաբար այս ավանդույթը տարածում է ունեցել նաև անգլիական իրականության մեջ, քանի որ անգլերենում առկա է «*It's time to lay our nuts aside*» դարձվածքը, որը ևս նշանակում է «տղայական հիմարությունները թողնելու, տղայական զվարճանքներից հրաժարվելու և լրջանալու ժամանակն է»:

Ինչպես նկատում ենք, հայերենի և անգլերենի՝ սննդանուն պարունակող դարձվածքներն իրենց մեջ ամփոփում են պատմության գիրկն անցած բազմաթիվ հավատալիքներ ու ավանդույթներ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում տվյալ լեզվի ազգագրական ուսումնասիրությունների համար:

¹⁹ Cowie A. P., Mackin R., McCaig I. R., Oxford Dictionary of Current Idiomatic English, p. 455.

²⁰ Ղանալանյան Ա.Տ., Սոսթանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1960, էջ 53:

²¹ Brewer's dictionary of phrase and fable, 1968, p. 651.